ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Անցեալ 1912 թուականի յունուարից սկսած Հայրապետական աթոռ ս. Էջմիածնի պաշտօնական ամսագիրս հրատարակւում է յատուկ խմբագրական ժողովով, որի անդամները նշանակւում են Վեհափառ Կաթուղիկոսի ընտրութեամբ։ Նախկին կազմից հեռացել են Տ. Աբել աբեղայ և պ. պ. Մանուկ Աբեղեան և Ռուբէն Աբրահամեան, իսկ վերահաստատուել են Գէորգ Ալթունեան և Գուրգէն Էդիլեան։ Խմբագրական կազմը լրացնելու համար այս յունուարից նշանակուել է ևս Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանը, որին մի և նոյն ժամանակ հրամայուած է լինել նաև պատասխանատու խմբագիր պետական օրէնքների առաջ։

Ամսագրիս պաշտօնական մասը խմբագրական ժողովս ընդունում և առանց որևէ փոփոխութեան յանձնում է տպագրութեան, երբ Հայրապետական գործերից քաղուածները վաւերացուած են դիւանապետի, իսկ ս. Սինոդից տրուած տեղեկութիւններն այդ հաստատութեան անդամներից մէկի ստորագրութեամբ։ Կրօնական-բարոյական բաժնի խմբագրութիւնը ժողովի որոշմամբ թողնուած է Ներսէս վարդապետին, իսկ մնացած բաժինները խմբագրւում են ամբողջ ժողովով։

Ամսագրիս մէջ բացի կրօնական-բարոյական բաժնի յօդուածներից կարևոր տեղ պիտի յատկացնուի նաև մանկավարժական, գրական-բանասիրական, պատմական, գրախօսական-մատենախօսական գրուածքներին, ինչպէս նաև ազգային և եկեղեցական կեանքին։

Խմբագրութիւնս խնդրում է բոլոր կարող անձանց աշխատակցել։ Ցանկալի է, որ յօդուածները երկար չարունակելի չլինին։ Խմբագրութիւնս իրեն է վերապահում յօդուածները կրճատելու իրաւունքը, եթէ հեղինակն ա-

առջուց պայման չի դրել անփոփոխ տպագրելու։ Թարգմանութիւն ուղարկելիս պէտք է յիշատակել բնագիրը և, եթէ կարելի է, կցել նաև բնագիրը, որ յետ կը դարձնուի։ Զտպուած մեծ յօդուածները վերադարձնուում են հեղինակի հաշուով, իսկ փոքր նիւթերը ոչնչացնուում են։ Զտպուելիք նիւթի մասին կը յայտնուի ամսագրիս էջերում։

Յօդուածները վարձատրուում են։ Չափը որոշում է խմբագրութիւնս։ Չեն վարձատրուում այն յօդուածները, որոնց հեղինակները նիւթն ուղարկելու միջոցին չեն յիշատակել իրենց ցանկութիւնը վարձատրութեան մասին։

Խմբագրական ժողով:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացել է հետևեալ գրքերը.

1. Հայոց բառ ու բան, աշխատասիրութիւն Սահակ վարդապետ Ամատունու, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ, 1912 թ., գինն է 2 ռուբլի.

2. Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղէտը, հատոր Դ. և Ե., Կ. Պոլիս, գինն է 5+7½ ղրշ.

3. The Young Turks and The Truth about the Holocaust at Adana in Asia Minor, During April 1909. լոյս է տեսել 1913 թ.

4. Նոր-Զուղայի կենդրոնական, Գ. Քանանեան և Ս. Կատարինեան ազգային երկսեռ դպրոցների և Գ. Քանանեան մանկապարտէզի 1911—1912 ուսումն. տարեշրջանի տեղեկագիրը, Զուղա-Սպահան, 1912։

5. Գէորգ քահ. Մկրտումեանց, Զրկուածները (վէպիկների, պատկերների ժողովածու), Աստրախան, 1913, գինն է 50 կոպ.։

6. Здоровье-Лучшій даръ. Популярно-научная книга о новомъ методѣ Естественнаго самолѣченія для хроническихъ больныхъ. Изданіе т-ва «Реосъ», С. Петербургъ, цѣна 30 коп.